

եւ բռնաւոր եկեղեցականներ. — ոչ երբէք. — ուրեմն զարմանք ալ չէ որ ամէն ժամանակ սոցա եւ աշխարհականներուն մէջ բնական հակառակութիւն մը տեսնուի ընդհանրապէս, եւ այս հակառակութիւնը մասնաւոր գիպումներու մէջ աւելի սաստկանայ, աւելի աչքի դարնէ ու մեծ խռովութեանց պատճառ դառնայ:

Երբոր եկեղեցականը միտքը դնէ թէ ինքը անոր համար եղեր է որ մարդիկ իւր խօսքերուն մօտիկ ընեն նաեւ այն բաներուն մէջ՝ որ իրենց եկեղեցական վիճակէն ու իշխանութենէն դուրս են, — երբ որ ուղէ աշխարհականաց աշխատանքին պտուղը վայելել, եւ ինքը իրեն ընկած աշխատանքներէն պէսպէս պատճառանքներով ետ կենայ, — երբոր ուրիշ բան քարոզէ մարդկանց խօսքով, եւ ուրիշ ճանապարհ ցուցնէ վարքովը, — հարկաւ աշխարհականը կգայթակղի, կգանդատի, կտրտնջայ, կհակառակի, երբեմն նաեւ եկեղեցականին ուղիղ մտօք ու պարզ սրտիւ ըսածը ծուռի տեղ դնելով կարհամարհէ ու կմերժէ: Եկեղեցականը իւր պարտքերը մէկդի դրած, գերբնական իշխանութիւնը առաջ բերելով՝ կպահանջէ ամենէն սէր, մեծարանք, պատիւ ու հնազանդութիւն. իսկ աշխարհականը

բնականապէս հակառակ կենէ այն մարդուն որ ուրիշներուն վրայ ունեցած իշխանութիւնը միայն կուզէ բանեցընել՝ առանց իւր պարտքն ալ ճանչնալու ու կատարելու. չհնազանդիր այն մարդուն՝ որ չուզեր հնազանդիլ իւր պարտքերուն. պատիւ չիտար անոր՝ որ նախ ինքն իւր ճշմարիտ պատիւը չճանչնար ու ոտքի տակ կառնու: Անդին եկեղեցականն ալ ձայնը կբարձրացընէ թէ աշխարհականին պարտքն է ինծի հնազանդիլ, վասն զի իմ իշխանութիւնս երկնքէն է, իմ խօսածս ճշմարտութիւն է, իմ քարոզածս արդարութիւն է. վարքիս մի նայիք, վարմունքիս մի խառնուիք, կգոչէ, վասն զի ես եւս մարդ եմ եւ ազատ եմ. իբրեւ մարդ՝ կրնամ սխալիլ եւ տկարանալ, եւ իբրեւ ազատ՝ հրաման չեմ տար որ եւ իցէ մարդու որ իմ բաներուս խառնուի: Եւ ահա պատճառանդաւոր հակառակութեան եւ թշնամութեան եկեղեցականաց եւ աշխարհականաց մէջ, որ ատեն ատեն աւելի կսաստկանայ կամ կնուաղի զանազան պատճառներով, ու ընկերական եւ քաղաքական վիճակի պարագաներով:

Կոտենեմք ուրիշ յօդուածով մը թէ մեր ժամանակին ու մեր ազգիս եկեղեցականներն ու աշխարհականները ինչպէս են իրարու հետ:

Ն Ա Խ Ի Ջ Ե Ի Ա Ն Ի Հ Ա Մ Ա Ր

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ ԿՏԱԿՈՎ, ԶԳՈՒԱՄ ՓՈՂԵՐՈՒՆ ՎՐԱՅ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ (*).

Գ.

Նախիջևանի եւ Պետրապոլիոյ վիճակին առաջնորդութիւնը Գաբրիէլ Վարդապետին յանձնուած ժամանակը՝ հինգ վեց տեղէ յորդորանքներ ու խորհուրդներ տրուեցան նոր Առաջնորդին որ Հնդկաստանի փողերը ձեռք բերելու աշխատի՝ յօգուտ Նախիջևանի մէջ բացուելու գպրոցներուն, եւ նոյն քաղաքին մէջ հիմնուելու ուրիշ բարեգործական տեղերուն. այսինքն Նախիջևանէն, Զմիւռնիայէն, Պօլիսէն, Ասպահանէն եւ Ս. Էջմիածնէն:

Նախիջևանի մեծարդ Բաղաբազուխ՝ Աւաճայեան Սիմէոն Աղան՝ իւր եւ բոլոր քաղաքացւոց կողմանէ խնդիրք ըրաւ Առաջնորդին 1888-ին սկիզբները, որ նա շուտով սկսի պէտք եղած թղթակցութիւններն ընել ու՛մ հետ որ արժան դատի՝ որպէս զի այն կտա-

կաւանդ ստակները բերուին Հնդկաստանէն: Առաջնորդն ալ խնդրեց ու առաւ բոլոր այն գրուածքներուն օրինակներն որ կգըննուէին Նախիջևանի Դատարանը, որպէս զի տեսնէ թէ ինչ վիճակի մէջ է խնդիրը, եւ ինչ ընելու է որ յաջողութեամբ ձեռք ձգուի այն ազգային իրաւունքն որ զանազան պատճառներով, եւ մանաւանդ տեղեաց հեռաւորութեանը պատճառաւ, այսքան տարի մոռցուածի պէս մնացեր է:

Նոյն միջոցին Թայլանի քաղաքապետն ալ պաշտօնական գրերով հարցմունք ըրաւ թէ Նախիջևանի Դատարանին եւ թէ Առաջնորդին՝ որ արդեօք ինչ պատճառաւ Հնդկաստանի փողերը առանց պահանջուելու մնացեր են մինչեւ ցայժմ:

(*) Shu ky 133, 146:

Չմիւռնիայէն Արարատեան Արշալուստյն աղգասէր եւ մեծարգոյ խմբագրիչը յորդորական գրերով խորհուրդ կուտար Առաջնորդին որ Հնդկաստանի փողերը ձեռք բերելու աշխատի:

Պօլիտէն ուրիշ եռանդուն եւ խոհական աղգասէր զմիւռնացի մը ուրիշ մտերմական գրով նոյն յորդորանքը կրնէր, եւ միանգամայն Բաբաջանեան Մասեհի կտակին անգղիաբէն թարգմանութիւնը զրկեր էր Առաջնորդին, որ միւս գրուածքներուն մէջ չկար:

Մինչդեռ նոր Առաջնորդը կմտածէր որ այս գործը օր մը առաջ կարգի դնելու եւ աւարտելու համար՝ Հնդկաստանի Հայոց վիճակին Առաջնորդ Ամենապատիւ Թադէոս սրբազան Արքեպիսկոպոսին խորհուրդը եւ ձեռնադրութիւնը հարկաւոր է, եւ ինքը զայն պէտք է խնդրէ գրով, եւ ահա օգոստոսի 18-ին 1858-ին ինքը գիր ընդունեցաւ նոյն աղգասէր եւ բազմաշմուռ Արքեպիսկոպոսէն՝ յուլիսի 7-ին գրուած, յորում կրէր:

« Բարձր Արժանապատիւ Գարրիէլ Վարդապետ Այվազեան, Վիճակաւոր Հայոց Նոր Նախիջևանայ եւ Բեսարաբիոյ,

« Եղբայր ըստ հոգւոյ.

« Յետ լսելոյ մեր զգանկալի լուր ընտրութեանն Ձերդ Սրբութեան ի Վիճակաւորութիւն Նոր Նախիջևանայ եւ Բեսարաբիոյ, եւ զկնի ընթերցելոյ ի Ձէնց զմտադրութիւնն Ձեր բանալոյ գԻպրոց մի ազգային, ըզմակամ յօժարութեամբ ցանկալի լինէր մեզ մատուցանել Ձերդ Սրբութեանն զկարելին իմէնց ազգապարական օժանդակութիւն:

« Սովա ազգ առնեմք թէ իկալկամայ մայրաքաղաքին Հնդկաստանու՝ կան երկու կտակեալ գումարք, վերաբերելի Նոր Նախիջևանայ բարեկարգութեանն եւ սուրբ Խաչ վանիցն: Առաջին կտակն է՝ Մասեհի որդւոյ Մարտիրոսի, որոյ զամբողջ գաղափար ընդ սմին առաքեմք. զոր ընթերցեալ Ձեր՝ ամենայն հարկաւոր իմաստիցն ունիք հասու լինել: Ըստ տեղեկութեանն զոր յայնմէ՝ «Ազգասէր» լրագիրն, նոյն գումար ցամմ 1846 թովանդակեալ է ցնարիւր հազար կումարանայ ռուսի (իւրաքանչիւր կումպանայ ռուսի՝ արժէ տասն դուռուշ Օսմանեան). եւ գտանի իկառավարութեան Յիշատակաց դպրին Տէրութեանն Անգղիացոց որ իկալկամայ: Երկրորդ կտակն է Տիկին Կատարինէի Խօջամական՝ յանուն սուրբ Խաչ վանից Նոր Նախիջևանայ: Մայր դրամն նոյն կտակի ընդ անցեալ վախիցն մինչեւ ցարդ՝ յաւել կամ պակաս լինելոց է տասն եւ հինգ հազար կումպանայ ռուսի: Նոյն գումար գտանի արդ ընդ կառավարութեամբ Աղայ Յովհաննջանի էլիազեան, որ բնակի իկալկամայ քաղաքին Հնդկաստանու:

« Ձերդ Սրբութիւն յետ զայսօսիկ տեղեկութեանս ստանալոյ, ակն ունիմք թէ հաճիք զկարեւոր քանազիր աշխատութիւնսն Ձեր ոչ խնայել, վասն ստացման նոյն գումարաց:

« Վերաբերելի նոյն առարկայից այս են հարազատ խորհրդածութիւնք մեր առ Ձեր Եղբայրութիւնդ՝ յաղագս յառաջ վարելոյ զայն գործ: Ըստ որում կտակեալ գումարն Մասեհի իվաղ ժամանակաց հետէ առանց յիշատակութեան մնացեալ գտանի ընդ կառավարութեամբ Տէրութեանն Անգղիացոց որ ինչդիկս, վասն որոյ պահանջի, զայնմանէ խնդրամատոյց լինել Ռուսաց դեսպանին օտար Տէրութեանց, զի

նորին Պաշտաւափայլութիւնն հեղինակութեամբ պաշտօնի ըստ այնմ մասին արասցէ հետազոտութիւն իկառավարութեանէ՝ Հնդկաստանի բրիտանական Տէրութեան. եւ յետ զամենայն հարկաւոր ծանօթութիւնսն ստանալոյ սակս այնր՝ կանոնական կարողութիւնով պահանջել եւ ստանալ զայն գումար, եւ առնել կարգադրութիւն յաղագս այնր: Գումարն որ գտանի ընդ կառավարութեամբ Աղայ Յովհաննջանի, թէպէտ է իվաղ ժամանակաց հետէ, եւ գողջիր ընդ Թիւսանիտացեալ դասեալ, այլ յուսամք թէ մերով գործակցութեամբ մարմ իցէ զայն իգիտ ածել. ոյր վասն առաջարկեմք Ձերդ Սրբութեանն, զի եմէ բարեյօժարեցիք՝ երեք համաթիւ օրինակաւ գրեալք զմուղ՝ կարողութեան ըստ օրինակին զոր առաքեմք ընդ այսմ: Հայնսիկ վէքիլագիրս հաստատուել պարտ է քաղաքական կառավարութեանն վկայագրութեամբ, եւ օմանց հայոց երեսեկաց ստորագրութեամբ. իսկ առաւել հարկաւորն է վկայել տալ յայն վէքիլագիրսն՝ զոք իդեսպանաց կամ ինկապատասց Անգղիացոց եղելոց իսահմանին Ռուսաստանի: Յետ զայն ամենայն տնօրինելոյ Ձերդ Սրբութեանն, զվէքիլագիրսն առաքեալք առ մեզ, զի ըստ Տեառն աշուղիւյ զկարելի քանս մեր արկցուք իգործ տակս ստանալոյ զայն գումար:

« Եմէ ըստ Աստուծոյ խնամոցն ազդեցիկ ստացումն յիշեալ գումարոյն իծեռն մեր, ազատ իքաղաքական եւ իկանոնաւորեալ ծախսոցն, որ ինչ գումար հասանիցի առ մեզ, ունիմք փոխադրել զայն առ Ձեր Սրբութիւն՝ յօգուտ սուրբ Խաչ վանիցն Նոր Նախիջևանայ, ըստ տնօրէնութեանն զոր ըստ այնմ մասին ստանալոց եմք ի Սրբութեանն Ձերմէ:

« Առաւել բարեմաղթութեամբ, մնամք Ձերդ Բարձր Արժանապատուութեան բարեացակամ, Պարսկաստանայ եւ Հնդկաստանի Հայոց Եպիսկոպոս ԹԱԳԻԵՆՍ:

Համար 407.

ԻԶուղայ, յԱմենափրկչի Վանս.

յ7 Յուլիսի 1858, եւ ՌՅԷ:

Թադէոս սրբազանին այս բարեսէր առաջարկութեանը մեծ շնորհակալութեամբ եւ ուրախութեամբ սրտի պատասխան գրեց Առաջնորդը, եւ անկէց ընդունեցաւ այն երկու տեղեկագրոց օրինակը կամ պատճէնը՝ զորս նոյն սրբազան Արքեպիսկոպոսը յուղարկեր էր առ Սիւնհոգոսն Ս. Էջմիածնի, եւ զոր հարկ կհամարիմք այս տեղ հրատարակել՝ թէ իբրեւ մանրամասն եւ լիակատար տեղեկութիւն այս աղգային գործողութեան վրայ, եւ թէ իբրեւ նոր ապացոյց անշահասէր փութոյն եւ աղգասիրական աննախանձ աշխատութեան Առաջնորդին Հայոց Պարսկաստանի եւ Հնդկաստանի.

Ա.

« Առ Լուսաւորեալան Հայոց Սիւնհոգոսն Ս. Էջմիածնի

« Իվիճակաւորէն Պարսկաստան

« Նայ եւ Հնդկաստանի Հայոց

« Յայտարարութիւն.

« Յերրորդում ներկայ ամսոյ ընկալեալ զգրեան իմ Սեպտեմբերի համարաւ 1686 ծանուցագիր Սինոդիդ իմասին կրտակեալ գումարաց իկալկամայ վախճանեալ Տիկին Կատարինէ Խօջամակ եւ Մասեհի Մարտիրոսեան, եւ հասու լեալ ամենայն ծանուցմանց Սինոդիդ, զպատասխանին մեր յայտ առնեմք: Իկալկեալ գումարաց Տիկին Կատարինէ Խօջամակ արդ ամէմար մնացեալն է միայն հրիտակեալն յանուն Աղ-

վայ սուրբ Խաչ վանիցն. իսկ մնացեալ գումարք յանուն այլ բարեգործութեանց նշանակեալ, ստացեալ են զվճարումն ինքնոն հանգուցեալ Վրժանէս սրբազան Եպիսկոպոսի՝ Նուի-րակին Սրբոյ Էջմիածնի իշնդիկս։ Առիթն որ յամեցուցեալ է զհատուցումն յիշեալ գումարոյն՝ է այս՝ զի արդի կենդա-նի կտակակատար հանգուցեալ Կատարինէ Տիկնոջ՝ Աղայ Յովհաննէանն էլիազեան, համաձայն քաղաքական օրինաց Անգղիացոց պահանջէ զի Վրժակաւորն յիշեալ սուրբ Խաչ վանիցն Ազովայ տալով ըստ օրինի զանդորրագիր, լիցի վկայութիւն դեպքանի կամ հիւպատոսի ուսման Անգղիացոյ եւ տեղական կառավարութեանն, այսինքն թէ ստորագրող եւ կնքողն Նոյն անդորրագրոյ է իսկական Վրժակաւորն սուրբ Խաչ վանից. զոր յետ ստանալով իւր՝ վճարելոց է զգումարն առ անձն նշանակեալ ի Վրժակաւորէն սուրբ Խաչ վանից։ Ոչ լինելով մինչեւ ցարդ մտադրութիւն սոյն խնդրոյ եւ պահանջման Աղայ Յովհաննէանի էլիազեան, և ըստ պէտքս անօրէնութեանց լինելով պահանջումն Նոյն գումարոյ, ան-վճար մնացեալ եւ յամեցեալ է մինչեւ ցարդ. եւ արդ իսկ առանց պատրաստելոյ զանդորրագիրն ըստ խնդրոյ կտակա-կատարին Կատարինէ Տիկնոջ, ոչ վճարեալ լինի Նոյն գու-մար այլով անօրէնութեամբ։ Չեն անյայտ խոնդկութենէ մերմէ ձեռնարկութիւնքն ի Տէր հանգուցեալ Վեհափառ Հայրապետին՝ եղելոյ ըստ այսմ մասին. զի ձեռնարկութիւնքն այնքովի չեղին առանց մեր գիտութեան եւ ըստմանեալ գործակցութեան. այլ որպէս յայտնեցաք, առանց իկատա-րումն անելոյ զպահանջողական խնդիր Աղայ Յովհաննէանի էլիազեան՝ դժուարին եւ թերեւս անկարելի է ստացումն գումարոյ այնմիկ։ Չայս քաջ գիտելով մեր, ոչ միայն ըստ յայտնելոյ ոմանց ի հարազատից Նոյն Աղայ Յովհաննէանի, այլ ինքնին իսկ ըստ այնմ մասին առ մեզ եղեալ գրագրու-թեանց, յ 7 յուլիսի Նոյնեայ ամի 407 համարաւ գրեցաք առ Բարձր Արքանապատիւ Գաբրիէլ Վարդապետ Ալլազեան՝ նշանակեալ Վրժակաւորն սուրբ Խաչ վանից Ազովայ, պատ-րաստել զկարողագիր ըստ պահանջմանցն Աղայ Յովհաննէա-նի, վկայել տալով իմա դեպքանի ուսման կամ հիւպատոսի Անգղիացոց. զի լուծեալ կնճոյ խնդրոյն՝ արձակեցի գումարն այն յօգուտ եւ իւլէտս սուրբ Խաչ վանիցն այնմիկ։ Չունիմք տակաւին զպատասխան ինչ ըստ այնմ մասին ինո-րին Բարձր Արքանապատիւութենէ։

Իսկ իմասին կտակեալ տան Մասեիի Բարաջանեան առ իտալ Սինդիկոս զտեղեկութիւն Յոյս հանգամանօք, զԹեր-թըս Սեզգասէր՝ լրագրոյ (յորում կալ օրինակ Նոյն կտակի եւ դիտողութիւն վերատեսչի լրագրոյն այնմիկ) ընդ ամին ա-ռաքեմք։ Այդ առարկայ առաւել ուշադրութեան է արժա-նի, եւ միջոցն որով յառաջ վարի խնդիրն, ըստ մերում կար-ծեաց լինել պարտի այսպէս. զի Վրժակաւորն Նոր Նախիջե-անայ պահանջեցէ զայն գործակցութեամբ Սինդիկոս, ըստ օրինի կարգելով վերի ի Վալլիանայ լեալ զԱղայ Յարութիւն Արքարեան ակաւաւոր վաճառականն, զի նա պահանջեցէ իրրիտանական կառավարութենէ Հնդկաստանի զարդինս Նոյն կտակեալ տան, որ կամ ստանալոց է զայն, կամ պա-րագայից խնդրոյն հաստ. լինելով՝ հանգամանօքէն յայտնե-լոց է թէ որով միջոցօք կամ անօրէնութեամբ յանգ ելա-նելոց է Նոյն պահանջ։ Ինչոպայ յԱմենափրկչեան սուրբ Վանք, յ 9 հոկտեմբերի 1858 եւ ազգական ՌՅԼ, համար 632։ Յիսկականին ստորագրեալ, Պարսկաստանայ եւ Հնդկաս-տանի Հայոց Եպիսկոպոս ԹԱԳԻԵՌՍ։

Բ.

Առ Լուսաւորեալեան Հայոց Սինդիկոսն Սրբոյ Էջմիածնի

- Ի Վրժակաւորէն Պարսկաստա-
- նայ եւ Հնդկաստանի Հայոց

• Յայտարարութիւն։

• Սերկեան 632 համար յայտարարութեամբ մերով յայտ-նեցաք Սինդիկոս զտորհորդ թեր իմասին կտակեալ տան Մասեիի Բարաջանեան. այլ իմասին Նոյն առարկայի խօսա-

կից լինելով ընդ ոմանս՝ որք ունէին մասնաւորապէս տեղե-կութիւն զկանոնաց բրիտանական կառավարութեան, յա-ւելումք յայտնել սովաւ զուսեալն մեր ինոցանէ։ Ըստ անգ-ղիական օրինաց, եթէ յրեմաց 36 ամաց չիցէ որ պա-հանջող գոյից կտակի իմիք, կտակեալ գոյն սեպականին Տէրութեան. եւ եթէ յետ 36 ամաց իցայտ եկեալ իսկական տեարց Նոյն ստացուածոց պահանջեցան զայն, ընդ անըն-դունակս համարի Նոյն պահանջ։ Եթէ ստուգիւ աղպէս իցէ՝ որպէս լսեմք, իրաւունք տանն կտակելոյ ի Մասեիի Բարաջանէ լարդէն անցեալ է իտէրութիւնն Անգղիացոց. ուստի առ իւրահանջը զայն՝ պիտոյ է խնդրարկու լինել առ վեհափառ Թագուհին Անգղիացոց, ոչ որպէս իրաւունք կտակի պահանջելով զայն տուն կամ զարդինս այն, ալ որպէս շնորհ կարեկցական եւ արքայական, տալով պատ-ճառս զանձանօթ մնալն այնմիկ առարկայի մինչեւ ցարդ։ Եթէ ըստ ամին օրինակի պիտոյ իցէ յառաջ վարել զխնդիրն, գործ է այն Հայրապետի ընդհանուր ազգի, զի Թերեւս խնդիր Նորա յարգեցի։ Ընկալաք զմիւս եւս ծանօթութիւն զի հանգուցեալ Վեհափառ Հայրապետ իմասին Նոյն տան գրեալ է առ յիշատակեալ իմէնց Աղայ Յարութիւն Արքա-րեան իկալեալեալ, որպէս զի յայտնեցէ նա թէ զհարդ-մարթ է առնել զպահանջ կամ զձեռնարկութիւն յաղագս Նոյն տան, եւ Աղայ Յարութիւն Արքարեան բացատրու-թեամբ գրեալ է նմա զպատասխան իւր Նովին իմաստիւք. զի ըստ որոյ իրաւունք կտակին անցեալ է ի Տէրութիւնն, վասնորոյ որպէս խնդրարկու շնորհաց արժան է դիմել առ վեհափառ Թագուհին Բրիտանացոց։ Մարթ է ինքնեանս վեհափառ Հայրապետին հանգուցելոյ որոնել եւ գտանել զայն գիր, եւ առնել զպատշաճաւոր անօրէնութիւն։ Մեք յուսամք թէ զկարեւորն իմէնց ծանօթութիւնս սակս այնմիկ խնդրոյ փութեցաք հաղորդել Սինդիկոս—Ինչոպայ յԱմենա-փրկչեան Վանք, յ 9 հոկտեմբերի 1858, եւ ՌՅԼ, համար 634։ Յիսկականին ստորագրեալ, Պարսկաստանայ եւ Հնդկաս-տանի Հայոց Եպիսկոպոս ԹԱԳԻԵՌՍ։

Ս. Էջմիածնի Սինդիկոսը Թագէտ սրբա-զանին տեղեկագիրն առնելուն պէս՝ փութա-ցաւ գրել առ Գեր. Գաբրիէլ Վարդապետը փետրուարի 27-ին 1859-ին ընդ համարաւս 600, ընդարձակ հրամանագիր մը, յորում յետ իմէջ բերելոյ Պարսկաստանի եւ Հնդկ-կաստանի Հայոց Առաջնորդէն ընդունած վե-րոյշիչեալ տեղեկութիւնները՝ կրտէ։

« Իկտակագրին Բաբաջանի կամ հասարակ կոչմամբ Մարտիրոսի որդի Մասեհի համա-գանցւոյ, իմիջի այլոց իհատորն Գ՝ գրի. — Իմ ամենայն կայքն տանեւ վեց բաժին կամ մասն համարելով ինոյն տանեւ վեց մասիցն ութ մասն վախճ արարի, եւ կատարելապէս ետու Ազով դաւառող Նոր Նախիջեանու քա-ղաքի Հայոց բարեկարգութեանց։ Այսինքն երկու մասն դպրատանցն, երկու մասն աղ-քատանոցին, երկու մասն հիւանդանոցին եւ երկու մասն որբոց տանն, առ իմնալ անդ ի նստա ինձ յիշատակ իբաւութիւն մեղացս եւ իմ խիթարութիւն աղգին մերոյ »։ — Իգործոց Սինդիկոս երեւի, զի քաղաքապետն Տագան-րոգու յարձանագրութեանց գտանեցելոց ի վերայ նախագրանց եկեղեցւոյն Նոր Նախի-

Ջեւանայ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաորչին՝ նկատեալ է թէ ինախիջեւան քաղաքի պարտի լինել ուսումնարան վասն աղքատ եւ որբ մանկտեաց Հայոց, ըստ կտակաւանդութեան Ջուղայաբնակ Յովհաննանի Կիրակոսեան. եւ չտեսեալ նորա ուր ուրեք զայնպիսի շինութիւն, գրութեամբ ի 1-ն մարտի 1838 ամի Համար 1282, խնդրեաց ի Սինոդէս զհանգամանօրէն տեղեկութիւն զայնմանէ: Իսկ սա ի գտնեցեալ ընդ տեսչութեամբ իւրով կաթողիկոսական թուղթսն որոնեալ եգիտ զհետեւեալ հանգամանս.

«Յիշեալ հայկազնուհին ի 1796 ամի իմիջի ալոց աւանդեալ է կտակաւ՝ յօգուտ բարեկարգութեան նոր նախիջեւանայ, սուրբ Խաչի վանից որ ի Բէֆէ քաղաքի, եւ բարեկարգութեան նորաշէն քաղաքի Գրիգորապօլս, զգումարս գրամոց զերիս հաւասարաբանակ մասունս, յատկացուցանելով իւրաքանչիւրոց ինոցունց զ2542 ուրբիս, առ որ եւ կարգեալ է կտակաւատար զհարազատ եղբայր իւր՝ Բզկալիաթաբնակ Էլիազն Մինասեան. յետ մահունն որոյ՝ զտեղի կալեալ է որդի նորա աղայ Յովհաննէսն Էլիազեան, որ երկարաժամանակեայ բաղմազլմի գրագրութեամբք եւ թախանձանօք առ հոգեւոր տեսուչս Հայոց, վասն ստանալոյ եւ հասուցանելոյ զայնոսիկ գրաման ըստ պատկանելոյն, խնդրեալ է Բզկալաշաճաւոր անօրէնութիւն ի հոգեւոր իշխանութենէ: Հուսկ ուրեմն երանայիշատակ Կաթողիկոսն ամենայն Հայոց Ներսէս, գրութեամբ յ30-ն յունիսի 1832 ամի, համար 267, խնդրեալ է զանօրէնութիւն նախկին փոխարքային Կովկասու իշխան Վորոնցովի, զի ընդ ձեռն որոյ հարկն է պահանջեցէ ի կալիաթաբնակ Յովհաննանէ Էլիազեանց զկտակաւանդեալ ի հօրաբեռէ նորին Կատարինեայ Խօճամալեանց գումարն: Առ որ նորին Լուսաօրայլութիւնն յետ ինչինչ գրագրութեանց ի վերջոյ ծանուցեալ է նորին Սրբութեան, թէ նախարարն օտարական գործոց Տէրութեան Անգղիոյ Լորդ Մէյլմէսըիւն ենթադատէ՝ զի վասն բերել տալոյ ընդ ձեռն դես պանութեան Թեհրանայ ի կալիաթայէ ի Թիֆլիզ զկտակաւանդեալ ի Խօճամալեանէ գրամս՝ առաւել զիւրին լինի, եթէ Յովհաննան Էլիազեան տացէ ի գանձարանն զլիաւոր կաւալարութեանն Հնդկաստանի ի կալիաթայ զհաւատարաբանակ գումար. իսկ նախարարն նորին Մեծութեան կարէ յայնժամ տալ առ այն գումար զմուրհակ՝ յանուն գեներալ գուբերնատորի տեղոյն. կամ մարթ է Բզ

գումարն զայն յանձնել ումեք իտեղանաւորաց (բանկիր) Կալիաթայու, այնու զի՝ նախարարն նորին Սեծութեան որ ի Պարսկաստան, տացէ զմուրհակ յանուն այնր սեղանաւորի: Այլ յետ այսր ամենայնի՝ չերեւի ի գործումն թէ զմրպիսի անօրէնութիւն է արարեալ ըստ այսմ նորին Սրբութիւնն. ուստի Սինոդս էջմիածնի զվերջին պատասխանագրութիւն նախարարին Անգղիացոց օտարաստահան գործոց առ գեսպանն մեր ի Լոնդոն Բարոն Բուենտովն, հաղորդեցելոյ Պատրիարք Կաթողիկոսին Ներսիսի, գրութեամբ գիրեկտորի գիւանատան Տեառն Փոխարքային Կովկասու՝ ի 25 մարտի 1833 ամի համարաւ 2693, ի 3 սեպտեմբերի 1838 ամի համարաւ 1686 ծանուցեալ վիճակաւոր Առաջնորդին Հայոց Հնդկաստանի Թաղէոս Եպիսկոպոսին, առաքմամբ առ նա պատճէնի այնր գրութեան՝ յանձնեաց նորին Բարձր Սրբազնութեան հոգատար լինել վասն հասուցանելոյ զայնմանէ իտեղեկութիւն Պարոն Յովհաննանի Էլիազեան, հրաւիրելով զնա ի պարտաւարտաշաճ կատարումն վերադեալ գրութեան նախարարի Անգղիացոց, այնու եղանակաւ զոր համարի պարոն նախարարն այն յարմար եւ գիւրակատար առ ի հասուցանել ի Սինոդս զկտակեալ ի Տիֆլին Եկատարինեայ գրաման վասն առաքելոյ ըստ նշանակմանն: Այլ եւ սոյն սա նկատեալ ի գրագրութեանց հանգուցեալ Կաթողիկոսի, զի իտեղիս տեղիս յիշատակի անուն ուրումն կալիաթաբնակ հայկազնոյ՝ յորջորջելոյ մերթ Մոլմէս Մարտիրոսեան եւ մերթ Մասեհ Բաշանեան Մարտիրոսեան, այլ չէր պարզաբանեալ թէ ոչք ոմանք են այնոքիկ անձինք, զմրբան գումարս գրամոց եւ յօգուտ որոց յականէ յանունն են կտակեալ, երբ եւ մրպիսի պայմանաւ, վասն որոյ յանձնեաց նորին Սրբազնութեան հասուցանել Սինոդիս զբացայայտ առ այն տեղեկութիւնս վասն պարտաւարտաշաճ անօրէնութեան. եւ զվերոգրելոյն համարաւ 1687 ծանուցեալ քաղաքապետին Տագանբօգու, յաւել թէ յետ ստացման պահանջելի տեղեկութեանցն եւ ի ձեռս բերելոյ ի Խօճամալեանէ զկտակաւանդեալ գրաման, Սինոդս ունի առնել զհամապատշաճ անօրէնութիւն վասն գարծուցանելոյ զայնս ըստ պատկանելոյն, ըստ չափու յատկացուցեալ գրամոցն. ՀՐԱՄՍՅԵՑԻՆ, որովհետեւ, որպէս երեւի ի ներկայ յայտարարութենէ վիճակաւոր Առաջնորդին Պարսկաստանայ եւ Հնդկաստանի, զի նա արդէն յիւր

մէ կողմանէ իդործ է եղեալ զկարեւորն միջոց, համապատշաճ հանդամանաց առարկային, վասն անխափան իձեռու բերելոյ յէկիազեանէ զկտակաւանդեալ դրաման, խնդրելով առ այն իմարձր Արժանապատուութենէ Զերմէ զվաւերական հաւատարմագիր ըստ ցանկութեան նոյն էլիազեանի. այլ չէ յայտ Սինոգիս թէ տուեալ է ցարդ զկատարումն պահանջից Թագէոս Եպիսկոպոսի՝ թէ ոչ. վասն որոյ յանձնել Բարձու Արժանապատուութեան Զերում նսեւ իկողմանէ Սինոգիս, զի դուք ջան իդործ եղեալ փութացուցիք զառաքումն յիշեալ հաւատարմագրոյն առ Թագէոս Եպիսկոպոսն՝ կատարմամբ նախընթաց պայմանացն, դատելոց ինորին Սրբազնութենէ անշուշտ կարեւոր առ անարգել յառաջատութիւն գործոյն: Իսկ զառարկայն կտակաւանդեալ տան Մասեհի Բաբաջանեան՝ իբրեւ կարօտ առանձին միջնորդութեան Կաթողիկոսի ամենայն Հայոց, ըստ յարմարագատութեան Թագէոս Եպիսկոպոսի՝ ըստ օրինաց բրիտանական տէրութեանն, ընդ որոյ տիրապետութեամբ անցեալ է տունն այն, իպատճառս անցուցանելոյ զօրինագրեալ ժամանակն կատարման կտակին, թողուլ ցգալուստ այսր վեհափառ Կաթողիկոսի ամենայն Հայոց Տեառն Մատթէոսի. յետ որոյ տալ զայսմանէ զառանձին զեկուցումն վասն համախոր-

հուրդ տնօրէնութեան իրին:—Ի 27 փետրուարի 1859 ամի եւ ազգական ՌՅԸ. ի Սուրբ Էջմիածին:

Գաբրիէլ Վարդապետը այս հրամանագիրն առնելուն պէս՝ փութացաւ պատրաստեց Թագէոս սրբազանին յուղարկած օրինակին համեմատ կարողագիրը, այսինքն գործակալութեան գիրը, նոյն Արքեպիսկոպոսին անուանը վրայ. երեք օրինակ ըրաւ: ու հետ զհետէ յուղարկեց Ասպահան: Այն կարողագրոյն գրելաւոր յատկութիւններն այս էին, որ նախ՝ միայն Խօջամալեան Կատարինէ տիկնոջ թագած ստըկին համար տրուած էր. երկրորդ՝ Այվազեան Գաբրիէլ Վարդապետէն տրուած էր՝ իբրեւ յԱռաջնորդէ վիճակին նախիջեւանի. եւ երրորդ՝ նորա իսկապէս Առաջնորդ լինելուն եւ այն կարողագիրը ստորագրելուն կվկայէին՝ իրեն գտնուած տեղոյն, այսինքն Թէոդոսիոյ, քանի մը գլխաւոր անձինքը ի Հայոց եւ յօտարաց, եւ նոյն քաղաքը ընակող Անգղիոյ հիւպատոսը՝ Պարոն Քլիփըրթոն՝ իւր ստորագրութեամբն ու կնքովը հաստատեւ էր:—

Յաջորդ յօգուածին մէջ կտեսնեմք թէ այս ամենայն գործողութիւնները ինչ կերպով ուղեցին հասկընալ կամ ինչպէս հրատարակեցին քանի մը անբարեհալ անձինք, եւ միամիտ մարդկանց սիրտը պղտորեցին:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔ.

Ի՞նչ կայ ծակող քան զամենայն սուր երկայրի:

— Զրպարտիչ լեղուն:

Ո՞վ մեռաւ որ ծնած չէր:

— Աղամ նախահայրը:

Ո՞վ ծնաւ ու չմեռաւ:

— Եղիա մարդարէն:

Ի՞նչ բանի նման է մարդկային կեանքը:

— Վառուած լապտերի, որ սրբան այրի՝ այնքան կնուազի ու վերջապէս կանցնի:

Ի՞նչ բան է ծերութիւնը:

— Տրամութիւն, որոյ հասնելուն ամենեքեան կցանկան:

Ո՞ր բանը ամենէն աւելի դժուար է քննել. — Մարդոյ սիրտը:

Մարդկային ընկերութեան մէջ ո՞վ է աւելի յաղթութիւն անողը:

— Համբերողն ու թշնամոյն ներողը:

Ո՞վ պարտք չառած պարտապան կհամարուի:

— Որուն հաւատացուեր են գաղտնիքներ:

Գերդաստան մը ինչո՞վ երջանիկ կլինի, եւ ինչո՞վ դժբաղդ:

— Երջանիկ կլինի երբ ընտանիքը սիրով կը հնազանդին մէկ խելացի կառավարչի մը հրամաններուն. եւ դժբաղդ կլինի՝ երբ ամէն մարդ ինքնահաւան է ու չմիաբանիր այլոց հետ: